

# ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅԵՑՐԷՆԻՄԲԱԿՐԱՊԵՏ Մ. ՊԱՆՏԱՍՐԵԱՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դասախօսք. եւ Հրատարակախօսք.

- 1. Ձեւաչրջում — Ռ. Փեռիկ —  
(Ս. ԵՐԿԱՆԵԱՆ) ..... 317
- 2. Դպրոցը եւ Առողջապահու-  
թիւնը ..... 326

Դիտական Լուրեր եւ Նորուքիւններ

- 3. Կապոյտ Հազի Միքրոպին  
եւ Շիճուկին գիւտը (Լա  
Ռըվիլ) ..... 331
- 4. Արեգակին ջերմութեան  
փոփոխութիւնները ..... 334

- 5. Մեզուներու համաճարակ  
հիւանդութիւնը եւ անոր  
միքրոպը ..... 335

Վերջին Հրատարակութիւններ

- 6. Բժշկի Զրոյցներ N° 5, 6  
եւ 7 ..... 339
  - 7. Պատանի ..... 341
  - 8. Մեր վերջին Քննադատու-  
թիւնը « Մուրճ » ի վրայ 345
  - 9. Սուա լուրի մը առթիւ . 346
  - 10. Քարթ փոստալներու դե-  
ղեցիկ հաւաքածոյ մը ... 348
- Յայտարարութիւններ .

Բ. ՇՐՋԱՆ (1901-1902 ՆՈՅԵՄԲԵՐ) ԹԻՒ 11

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ — ԽՄԲԱԿՐՈՒԹԻՒՆ — ՏՊԱՐԱՆ

4, Rue Ortolan - PARIS

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր վերջին յայտարարութեան՝ թէ « ցարդ չվճարող գործակալներն ու բաժանորդները պէտք է անմիջապէս իրենց հաշիւները փակեն », շատ քիչեր պատասխանեցին :

Այս անգամ եւս կը գոհանանք վերջնական յայտարարութեամբ մը, ու կը հրաւիրենք մեր պարտաճանաչ բաժանորդները չուշանալ ապառիկ մնացած բաժնեգրիները մեզ զրկելու :

Կը հրաւիրենք մասնաւորապէս մեր Իզմիտի բաժանորդները, որոնք իրենց 9, 10 եւ 11 թիւերը պիտի ստանան անմիջապէս երբ բաժնեգրիներն ուղարկեն կամ տեղւոյն գործակալին միջոցաւ մեզ զրկեն :

Փարիզաբնակ մէկ քանի բաժանորդներ եւս ցարդ վճարած չեն. նմանապէս Ռուսաստանի մեր բաժանորդներէն ոմանք :

Չենք կարծեր որ մեր մինչեւ հիմա պարտաճանաչ եղող բաժանորդները, մեզ մղեն իրենց անուները հրապարակապէս յայտնելու մեր իրաւունքը պահանջելու համար :

Այն գործակալները, որոնք բաժնեգրին գանձած եւ մեզ չեն զրկած, թող փութան չվճարողներուն անուները մեզ իմացնել, գանձածնին անմիջապէս զրկելով :

Այն բաժանորդները, որոնք տեղական գործակալներու վճարած են ու թերթ չեն ստացած՝ այդ վերջիններէն թա՛ղ պահանջեն իրենց վճարած բաժնեգրիը եւ մեզ յայտնեն անպարտաճանաչ գործակալին անունը :

Այս յայտարարութիւնը վերջինը կը նկատենք. 12րդ թիւին մէջ պիտի հրատարակենք անպարտաճանաչներու անուները :

Հրատարակուած են գեղեցիկ տպագրութեամբ հետեւեալ երեք գրքոյկները, որոնք կը պարունակեն մեր ազգային կեանքէն հետաքրքիր եւ յուզիչ պատկերներ :

**ՈՒՆՏ (Ա. ԲԷԼԼՈՒ-ԲԷԿԵԱՆ)** գին 1 ֆրանկ

**ՄԿԱ ՎԱՍ ԶՈՒՆԻՄ (ԳԻԻԼՍՍԱՆՏԻ)** գին 50 սանք.

**ՀԱՅԲԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ**

**ԻՔՐԵՒ ՅԱՆՏԱԿՈՐԾՈՒԹԻՒՆ**

**(Ա. ԲԷԼԼՈՒ-ԲԷԿԵԱՆ)** գին 1 ֆրանկ

Գրքոյկներու վաճառումէն գոյացած օգուտը պիտի յատկացուի Հայ Որբերուն, Վենետիկի Մխիթարեաններու բարեհաճ կարգադրութեամբ :

Գրքոյկները գնել ուզողները դիմելու են՝

Imprimerie Arménienne, VENISE, (St-Lazare — Italie)  
կամ Imprimerie B. Missac (4, rue Ortolan—PARIS)



**ՉԵՒՍՇԻՐՉՈՒՄ**

(Transformisme)

(Դաստիասութիւն Փրօֆ. Ռէմի Փէֆֆէր, Փարիզի Գիտութեանց Համալսարանէն)

Բժշիկի անդեցութիւնը : Լատարֆականութիւն — Բէտիմի բարեփոխիչ ազդեցութիւնը հրապարակ գրուեցաւ մանաւանդ Համարքէն : Վերջերս շատ մը կենսաբաններ կը զբաղին անով եւ կենանքի եղանակը կենդանեաց բարեշրջման ամէնէն կարեւորը կը նկատեն (նոյն իսկ մի քանիները զայն միակ սատարը կ'ընդունին) :

Կենանքի եղանակին ազդեցութիւնը կենդանիի մը գործարանաւորութեան վրայ զիւրաւ կ'ըմբռնուի : Արդարեւ կենանքի եղանակ մը պիտի կ'ենթադրէ եւ զանոնք գոհացնելու համար անոնց կուգան սովորութիւններ , այսինքն կենդանին աւելի յաճախ կերպով ինչ ինչ գործողութիւններ կը կատարէ , ետեւեաբար կարգ մը գործարաններ ըմտէպ կը գործածուին , մինչ ուրիշներ ընդհակառակը նուազ

Արդ , 1<sup>0</sup> գործարանի մը յաճախ գործածոււմը զայն կը զօրացնէ եւ կը զարգացնէ :

2<sup>0</sup> Ընդհակառակը գործարանի մը ոչ գործածոււմը զայն կը սկարացնէ՝ ձգտելով անոր անհետացմանը :

Լատարֆի օրեկն կամ գործածութեան եւ անգործածութեան տրի անուամբ ճանչցուած այս երկու սկզբունքները , ամէն օր դիտուած իրողութիւններ են : Դործարանին անուցումը իր յաճախակի գործածութեան կամ անգործածութեան համեմատ փոփոխութիւններ կը կրէ , որ կ'ազդեն անոր զարգացման վրայ : Այդ ազդեցութեան աակ , յայտնի է որ օրտակար գործարան մը կ'աճի եւ հետզհետէ կը զարգանայ յետագայ սերունդներու մէջ , սոյն գործարանը կրնայ նոր

պաշտօններու ծնունդ տալ եւ պաշաճ կերպով բարեփոխելի այդ վերջին դերին աւելի ձեռնհաս դառնալու, կամ ուրիշ խօսքով ընդունակ ըլլալու համար: Ընդհակառակը անօգուտ գործարան մը սերնդէ սերունդ կ'ընկճի, կը փոքրանայ եւ վերջ ի վերջոյ կ'անհրեւութանայ:

Ասոր մէկ գեղեցիկ օրինակը մեզ կուտան մութին մէջ ապրող կենդանիները: Անոնց աչքերը անօգուտ դառնալով վերածուած, տկարացած (réduit) կամ նոյն իսկ բոլորովին անհրեւութացած են. ընդհակառակը շօշափելիքները յաջորդած են անսողութեան եւ շօշափելիաց գործարանները զարգացած են:

Բէժ իմի ազդեցութիւնը շարունակուելով բազմաթիւ սերունդներու մէջ, հրաշալի կերպով կը բացատրէ այն սահմանուած ուղղութիւնը, զոր բարեշրջումը կը ներկայայնէ յատուկ շարքի մը մէջ: Եւ լաւագոյն կերպով կը բացատրէ պաշաճեցման մեքենականութիւնը՝ քան բնական ընարդութիւնը, եւ նոյն ինքը Տարուին ընդունած է անոր խոշոր մասնակցութիւնը՝ իբր փոփոխիչ պատճառ:

Ուեալանի տեսութիւնը. — Սակայն քանի մը բնապատմագէտներ բոլորովին կուսակից բնական ընտրողութեան, մասնաւորապէս Ուէսման, հակառակած են տեսակներու կազմաւորութեան մէջ բէժ իմի ունեցած ազդեցութեան գէմ: Լամարքի տեսութիւնը կ'ենթադրէ թէ իւրաքանչիւր անհատ կը ստանայ կարգ մը յատկանիշներ զոր կը փոխանցէ սերունդներուն, եւ այս վերջիններն ալ զանոնք աւելի կը շեշտեն միեւնոյն ճամբով: Բայց խիստ կերպով բողոքած են ստացախան յասխանիչերու ժառանգախանութեան կարելիութեան գէմ: Եսա մը սերունդներու մէջ մուկերու վրայ կատարուած փորձեր, որոնց պոչը կը կտրէին, չեն առաջնորդած ոչ անհետացմանը եւ նոյն իսկ տկարացմանը սոյն անդամին:

Ըստ Ուէսմանի, անհատ մը իր սերունդներուն կը փոխանցէ միայն իրեն բնածին յատկութիւնները, զոր կը ժառանգէր իր ծնած օրէն, ու երբեք այն յատկութիւնները՝ զոր իր կեանքի տեւողութեան մէջ ստացած է: Արդարեւ կանուխէն ձուէն ծնած բջիջները երկու որոշ խումբերու կը բաժնուին, մէկ խումբը կը կազմէ սերունային բջիջները (cellule germinale), որոնք ծնունդ կուտան սեռային բջիջներուն. միւս խումբը կը կազմէ մարմնածին

բջիջները (cellule somatique), որոնք անհատին մարմինը կը կազմաւորեն: Մարմինը (soma) միջավայրի եւ ըէժիմի ազդեցութեան տակ կրնայ կեանքի ընթացքին մէջ փոփոխութիւններ կրել, բայց անհատին այսպէս ստացած յատկանիչերը միմիայն իր վրայ կը ներգործեն, անոնք ոչ մէկ կերպով չեն անդրադառնար սերմնային բջիջներուն: Այս վերջինները պահուած ստացած են թիւ մը սահմանիչներ (determinants), որոնք ծնողքներէն իրենց կը փոխանցուին եւ զորս սեռային բջիջներու միջոցաւ պիտի փոխանցեն իրենց սերունդներոն: Ուրիշ խօսքով, այս ամէնը կը կատարուին իրր թէ ձուին կազմութեան համար՝ ծնողքներէն մտտակարարուած կենսահիշքի մաս մը պահեստի արուած էր, Վերջ ի վերջոյ յանձնուելու համար սերունդներուն: Ահա այս է որ Ուէսման կը կոչէ սերմնակաւ հիւր (plasma): Այս սահմանիչները կը գտնուին սերմնակաւ հիւթին մէջ, եւ անոնք են որ սերունդներուն կ'աւանդեն կարգ մը ժառանգական կոչուած յատկանիչներ, եւ սերմնակաւ նիւթին այս փոխանցումով է որ կը բացատրուի ժառանգականութիւնը: Սեռական իւրաքանչիւր ծննդագործութեան մէջ՝ այս սերմնակաւ հիւթը՝ միւս զուգակցին բերած հիւթին հետ խառնուելով՝ շատ թէ քիչ կը բարեփոխուի, ու այս երեւոյթն է որ կը բացատրէ անհատական զանազանութիւնը: Բայց, ձուն երբ միանգամ կազմուած է, սերմնային հիւթը արդէն կը կազմակերպուի եւ ձուէն ծնունդ առնող անհատին մէջ՝ նա միշտ ինք իր մէջ նոյնը կը մնայ, մարմինը (soma) ինչ փոփոխութիւն որ ալ կրէ:

Ժառանգականութեան այս տեսութիւնը վերջին աստիճան հրապուրիչ է. նա իր հռչակաւոր վայրկեանը ունեցած է երբևի՜ն եւ անտարակոյս մաս մը ճշմարտութիւն կը պարունակէ. բայց յայտնապէս խիստ բացարձակ է:

Նա մեզ կը տանի անհատական զանազանութեան եւ բնական ընարութեան բացարձակ գործողութեան, զոր անբաւական գտանք տեսակներու զանազանութիւնը բացատրելու համար: Այն փորձերը որ ստացական փոխանցութեան հակառակը օգտացուցանելու համար կը կատարուին, ոչ մէկ կերպով համոզիչ չեն, որովհետեւ անոնք կը գործեն ուրոյն յատկանիչներու վրայ, որոնք որ եւ է առնչութիւն չունին այն յատկանիչներու հետ, որոնց համար Վամարքի

տեսութիւնը հաւանական ժառանգականութիւն մը կ'ենթադրէ: Դարձեալ, զժուար է ընդունիլ որ մարմնոյ կրած բարեփոխումները ոչ մէկ անդրադարձում չունենան սերմնային բջիջներու վրայ: Արդարեւ մարմինն է որ այս վերջիններու անդառութիւնը կը կառավարէ: Մարմնոյ կրած բոլոր փոփոխութիւնները կրնան ներգործել, շատ թէ քիչ սերմնային բջիջներու անդառութեան վրայ, եւ հետեւաբար պէտք է բարեփոխեն որոշ չափով սերմնային հիւթը: Արդարեւ կը տեսնենք որ ալքոլամոլութիւնը թոքախտը եւ ուրիշ շատ մը հիւանդութիւններ, որոնք ստացական յատկանիշներ են, իրտպէս ժառանգական չեն, բայց սերունդներու վրայ խոշոր ազդեցութիւն մը ունին: Ինչ որ կը կործանէ սերմնական հիւթի անխախտութեան տեսութիւնը:

Համառօտ խօսքով Լամարքի տեսութիւնը անվթար կը մնայ: Նա իրողութիւնները այնքան լաւ կերպով կը բացատրէ, բարեշրջութեան ընթացքը այնչափ հրաշալի եւ ուժեղ փաստերով կ'ապացուցանէ, որոնք կարելի չէ մերժել բայց եթէ յայտնի հերքման մը առջեւ, որուն հասնելէ տակաւին շատ հեռու ենք:

Միջավայրի ազդեցութիւնը (ժէօֆրուա Սէն-Թ'Իլէր) . — Միջավայրը, որուն մէջ կ'ապրի էակը, բացարձակ ազդեցութիւն մը կ'ունենայ անոր վրայ. այս պատճառաւ միջավայրն ալ կը նկատուի փոփոխութեան իբր զօրաւոր սատար մը: Յայտնի է որ տաքութիւնը, լոյսը, արտաքին ամէն ազդակներ սնունդին վրայ նշանակելի սպաւորութիւններ կ'ընեն, որոնք մարմնոյն ամբողջ դործարանաւորութեան մէջ արձագանք կը գտնեն: Միեւնոյն արմատէ սերած էակներ տեղափոխուելով հեռաւոր երկիրներ, այսինքն տարբեր միջավայրերու մէջ, իրարմէ այն աստիճան կը զանազանուին որ կարելի է զանոնք նկատել իբր որոշ տեսակներ: Ողորկապատեան մը (արթեմիա—« artémia ») իր ապրած ջուրին ազիւթեան աստիճանին համեմատ խոշոր եւ անսպասելի տարբերութիւններ կը ներկայացնէ: Վանես կոչուած թիթեռնիկները, իրենց զարգացման ժամանակամիջոցին ենթարկուելով նուազ կամ բարձր բարեխառնութեան մը, շատ տարբեր գունաւորումներ կը ստանան:

Բուսաբանութեան մէջ, այս վերջին ժամանակներս մանաւանդ, եղած փորձեր ցոյց կուտան որ միջավայրի

տարբերութիւնները անոնց վրայ մեծ փոփոխութիւններ առաջ կը բերեն: Հոս միայն խօսեցանք այն բարեփոխութիւններու վրայ զոր կը կրէ մարմինը Ուէսմանի տեսութեան հետեւելու համար, թէեւ յայտնի է որ միջավայրը եւս ունի սերմնային բջիջներու վրայ ազդեցութիւն մը. բայց այս մասին որոշ տեղեկութիւն մը չունինք: Գիտենք որ միջավայրի փոփոխութիւնը սերունդներու վրայ զանազանութիւններ առաջ կը բերէ, բայց ի՞նչ տեսակ բնաւորութիւն ունեցող զանազանութիւններ, ոչ մէկ կերպով չենք կրնար այդ բանը նախատեսել:

Յանկարծական (brusque) զանազանութիւններ. — Մինչեւ հոս ընդունեցինք թէ զանազանութիւնները անզգալի աստիճանաւորութեամբ մը միայն կը կազմուէին, եւ թէ քիչ կարեւոր եղող բարեփոխում մը իսկ կատարուելու համար բազմաթիւ սերունդներու կը կարօտի: Բանի մը հեղինակներ ընդունած են յանկարծական զանազանութիւններու (variations brusques) կարելիութիւնը՝ տարով յանկարծ, մէկ սերունդով մը, ծնունդ նոր ձեւի մը: Որ եւ է պատճառաւ մը, կլիմայական կամ ուրիշ, կարգ մը անհատներ իրենց համազգիներէն շատ տարբեր կ'երևին, — հերեշաքանական (teratologique) անհատներ, այսպէս խօսելով, — ու այդ ճամբով առաջ եկած հրէշաւորութիւնը պիտի վերարտադրուի այդ անհատներու սերունդներուն մէջ: Արգարիւ, այդ յանկարծական զանազանութիւնը, կարգ մը պարագաներու մէջ ստիպողաբար կատարուելու էր, ու չենք պիտի թէ ուրիշ ինչ կերպով կարելի է բացատրել, օրինակի համար, ծովային բազմաթեւեան ասպղերու եւ ձախողատեան որովայնոտեայ կակամորթերու մեծ մասին գոյութիւնը: Վերը յիշուած արթեմիայի պարագան, յանկարծական զանազանութեան յայտնի օրինակ մըն է: Անկարելի չէ որ նմանօրինակ զանազանութիւններ կատարուիլ յաջողած չըլլան ուրիշ շատ մը պարագաներու մէջ: Բայց ի՞նչ չափով յանկարծական զանազանութիւնները կրնան մաս ունենալ նոր տեսակներու արտադրութեան մէջ, ահա ինչ որ կարելի չէ որոշապէս ըսել:

Կարճ խօսքով, երեք գլխաւոր սատարներ, անհասկանալի զանազանութիւնը, միջավայրը, կենցաղավարութիւնը եւ բաւական տարակրօտելի չափով մը՝ յանկարծական զանազանութիւնները, կը ձգտին միշտ կենդանական եւ բուսական

ձեւերը փոփոխել. — բնական ընտրողութեան յարատեւ գործու-  
նէութեամբ, այդպէս բաժնուած եւ կերպաւորուած զանա-  
զանութիւնները տեսակներու կազմութեան կը յանդին,  
որոնք զիրար կը վերածեն (se réduire) ազգաբանական  
սերունդներու մէջ. — ահա գործարանաւորութեան նկատ-  
մամբ այն ըմբռնուած՝ որուն կ'առաջնորդէ ձեւաշրջումի  
վարդապետութիւնը:

Ազգաբանական դասակարգութիւն. — Ձեւաշրջական գա-  
ղափարներուն հետ՝ բնական դասակարգութիւնը յատուկ  
եւ որոշ ուղղութիւն մը կը ստանայ: Այդ դասակարգու-  
թիւնը պարտի պարզել կենդանի էակներու ազգակցական  
յարաբերութիւնները, արտադրել, այսպէս խօսելով, անոնց  
ազգաբանական ծառը. դասակարգութեան նկարագիրները,  
որոնք այնքան կը գիւրացնեն, իրենց դիրքով ուսումնա-  
սիրութիւնը, պէտք է միշտ ախտաբանական երկրաբանական  
յատակագծով մը:

Դասակարգութեան մեկնակէտը միշտ բաղդասական  
կազմաբանութիւնն է (morphologie comparée): Տեսակներու  
մեծամասնութեան համար՝ ունեցած միակ մեթոտնիս հասուն  
ձեւերու բազմաութիւնն է զրացի ձեւերու հետ: Բայց  
բոլորովին առանձնացած տեսակներու համար այս միջոցը  
ճշմարիտ արգիւնք չտար: Միւս կողմէ, նոյն իսկ այն պա-  
րագային մէջ, ուր միջնական ձեւեր գոյութիւն ունին ու  
նոյն իսկ երբ անոնք բազմութիւ ալ չեն, երբեմն դարձեալ  
դժուար է կապակցութիւնները հասկնալ եւ համաբանու-  
թիւնները (homologie) սահմանել: Այսպէս կազմաբանական  
ծանօթութիւնները պէտք է միշտ ստուգուին:

Հնեաբանութիւնը (paléontologie) անցքի ծառայող ուրիշ  
ձեւերու յայտնութիւններով, տարբեր խումբերու երեւման  
թուականով, կրնայ նաեւ պատուական ծանօթութիւններ  
տալ, թէեւ դժբաղդաբար շատ անկատար՝ որպէսզի կարելի  
ըլլար անոր աջակցութիւնը վստահելի համարել:

Սաղնեածնութիւնը (embryogénie) այլապէս մեծ արժէք  
մը ունի: Եթէ ազգաբանական (patrogonie) օրէնքը բացար-  
ձակ կերպով ձիշտ ըլլար, սաղնեածնութիւնը ճշմարիտ  
միջոց մը պիտի ըլլար զանազան կենդանիներու ծննդա-  
բանութիւնը որոշելու համար:

Բայց ընդհանրապէս շատ մը երեւոյթներ կուզան այս  
տիպար սաղնեածնութիւնը կը խանգարեն:

1<sup>o</sup> Սաղմերու մէջ կրնան պատշաճողական փոփոխութիւններ (modification adoptative) առաջ գալ . այսինքն շարժական կամ պաշտպանողական մասնաւոր գործարաններ , որ սաղմի բնական ձեւը կը խանգարեն : Օրինակ ծովաստղերու մէջ մէկ քանիները տեղնուտեղը , նոյն իսկ յաճախ , մայրական գործարանին վրայ կը զարգանան . ասոնք կանոնաւոր սաղմնածնութիւն մը ունին բոլորովին յառաջընթաց : Ուրիշներ ընդհակառակը , թրթուրային (larvaire) լուղորդ ձեւեր ունին , որոնք կը կրեն արդիւնաւոր թերթիկներ , որ իրենց մասնաւոր ձեւ մը կուտայ : Սակայն չափահաս ձեւերու քննութեամբ յայտնապէս կը գտնենք որ բոլոր ծովաստղերը իրարու հետ ազգակցական սերտ կապեր ունին . ուրեմն պէտք չէ լուղորդ թրթուրային ձեւերը հաշուի առնել , անոնք կը բացատրուին լողալու պատշաճեցումով մը , որ տեսակին ամենակատարեալ ցըրուումը կ'իրականացնէ :

2<sup>o</sup> Ուշ ձուկի (éclosion tardive) ունեցող ձեւերու մէջ , պարագայ մը որ սաղմին պահպանման նպաստաւոր է , եւ հետեւաբար բնական ընտրողութենէն պահպանուելու բընոյթն ունի , — խանգարման ուրիշ պատճառներ առաջ կուգան . ու զլիւսաւոր պատճառ մըն է ձուկն մէջ սննդական հիւթի քանակութեան ժողովումը , որ սահմանուած է սաղմին պէտքերը գոհացնել , մինչեւ անոր ծնունդը : Ասկից առաջ կուգան ձեւազեղծութիւններ , որ առաւել կամ նուազ կերպով կը ծածկեն գործարաններու կանոնաւոր դիրքը : Դարձեալ պարզ իրողութիւն մը եւս ցոյց կուտայ թէ , այդ պարագային մէջ , սաղմը նախորդներուն համեմատն չէ , օրինակ եթէ զայն ձուկն հանենք անկարող է անկախ կեանք մը վարելու :

3<sup>o</sup> Երրորդ սատար մը , որ երբեմն կը ձգտի սաղմնածնութեան ծանօթութիւնները սկարացնել , սաղմնածնական արագացում (accélération embryogénique) անունը ստացած է : Ընդհանրապէս սաղմերը քիչ պաշտպանուած են , քան չափահասները . ուրեմն անհատին պահպանութեան համար օգտակար է՝ չափահասութեան կարելի եղածին չափ կարճ ժամանակի մէջ իրականանալը : Այն ատեն արտաբնական երեւոյթներու մէջ արագացում տեղի կ'ունենայ . սաղմնածնական շրջանները կրնան աննշմարելի կերպով անցնիլ , եւ նոյն իսկ բոլորովին ցատկել . ու սաղմնա-

ծնութիւնը այն ատեն չի ներկայացնէր իրեն երեւոյթներուն հետքն իսկ, որոնք կարելոր կը հայտնին ըլլալ կենդանիին ծագումը ճշդիւ սահմանելու համար: Ահաւասիկ այդ մասին օրինակ մը. նախորդ երեսներուն մէջ ըսինք թէ սողուններու եւ թռչուններու վզի կողմնական մասերու վրայ խակային ճեղքեր առաջ կուգան, որ յետոյ կը գոցուին, որոնք կ'ապացուցանեն թէ այդ օղատուն ողնայարաւորները սերած են ջրասուն նախնիքներէ: Կաթնատուներու վզի կողքերուն վրայ, կարգ մը կէտերու մէջ նրքորը (paroi) կը բարակնայ այն աստիճան որ կարծես թէ խակային ճեղքեր կազմուին. բայց այդ երեւոյթը չի շարունակուիր, ճեղքերը չեն բացուիր ու այդ նրբացումները, որ անոնց կը համապատասխանեն, քիչ վերջը կ'աներեւութանան: Երբեմն սաղմնածնական արագացումը աւելի կը շեշտուի եւ նոյն իսկ նրբացում չի չպատահիր: Ոչ մէկ բան այս զարգացման մէջ չի յիշեցնէր թէ անոնք ջրասուն ծագում մը ունեցած ըլլան:

Հոս դիտել կուտանք թէ բոլոր այս իրողութիւնները ոչ միայն ձեւաչըջումի ուժը չեն տկարացնէր՝ այլ կատարեալ կերպով կը բացատրեն զայն, որովհետեւ բոլորն ալ կը ծառայեն անհատին պաշտպանման կամ տեսակին ծաւալման, եւ հետեւաբար կը մտնեն այն յատկանիշերու (caractère) կարգին մէջ, որոնց ամբացումի դերը կը ստանձնէ բնական ընտրողութիւնը: Վերջապէս կը տեսնենք որ կենդանաբանութիւնը ի ձեռին ունի երեք կարգի իրողութիւններ, որ անոր կ'օգնեն դասակարգութիւնը կազմելու համար, որոնք զիրար փոխադարձաբար կ'ըստուգեն՝ անոր եզրակացութիւններէն ամէն տարակուսանք ջնջելու համար: Այս իրողութիւնները փոխնիփոխ կը կապուին Բազառական անդամագնութեան, Հնէաբանութեան եւ Սաղմնաբանութեան: Յենելով միանգամայն այս երեք գիտութիւններու տուած ծանօթութիւններուն վրայ, կարելի է կենդանական աշխարհի բնական դասակարգութիւնը յաջող կերպով կատարել:

Դասակարգութիւն. — Դասանունութիւն (taxonomie) ախտոսին տակ կ'որոշեն կենդանական ձեւերու կարգաւորապէս կազմուած խումբերու բաշխումը: Դասանունութեան արդի կանոնները գրեթէ նոյնը կը մընան, այնպէս՝ ինչպէս դժուար են « Լիննէ » էն:

Կենդանական միութիւնը տեսալին է (espèce) : Խուժքը , որ կ'ամփոփէ իր մէջ երկու կամ իրարու բաւական դրացի բազմաթիւ տեսակներ , կը կոչուի սեռ (genre) : Տեսակը միշտ կը նշանակուի լատին երկու անուններով , առաջինը սեռին անունն է , որ ընդհանուր է ասոր պարունակած ամէն տեսակներուն , միւսը մասնաւոր է՝ նրկատի ստնուած տեսակին : Սնուանման այս եղանակը կը կոչուի կրկնակ անուանակարգութիւն (nomenclature binaire) . օրինակ թուի արջը կը կոչուի « ursus arctos » , ճերմակ արջը « ursus maritimus » : Այս երկու տեսակները եւ միւս արջերը կը կազմեն արջ (ursus) սեռը : Ինչպէս որ թիւ մը տեսակները կը կազմեն սեռ մը , այնպէս ալ զրացի սեռերը կը հաւաքեն ընտանիքի (famille) — արջայինք — մը մէջ եւ զրացի ընտանիքները կարգի (ordre) — մսակերներ — մը մէջ : Շատ մը կարգեր կը կազմեն դասը (classe) — ստնաւորներ — շատ մը դասեր ճիւղ մը (embranchement) — ողնայարաւորներ :

Երբ այս բացատրութիւնները չբաւեն կը դիմեն ճիւղաբաժանումներու [sous embranchement] , ենթադասերու [sous classes] , եւն. , եւ նոյն իսկ ուրիշ անուններու , ինչպէս , գունդ [légion] , բաժանում [division] , եւ այլն : Ընդհանրապէս իուժք [groupe] բառը կը դործածեն քիչ ուրոշ իմաստով մը . այդ բառը կրնայ անխափր կերպով մատնանիշ ընել դաս մը , ընտանիք մը կամ նոյն իսկ ենթատեսակ մը [sous espèce] , ցեղ մը , եւն. :

Կենդանական քաղաւորութեան բաժանումը . — Ներկայիս մէջ կենդանական թագաւորութիւնը կը բաժնեն երկու ենթա-քաղաւորութիւններու [sous-regnes] , որոնք երկու տեսակ դործարանային կնճռոտութեանց կը համապատասխանեն .

1. Նախակենսիկներ [protozoaires] , որոնց մարմինը կազմուած է անդամազնական մի միակ տարրով մը եւ
2. Վերջնակենդանիներ , որոնք կազմուած են բազմաթիւ բջիջներէ , որոնք իրարմէ բաւական կը զանազանին :

ՍՍՐԳԻՍ ԵՐԿԱՆԵԱՆ

Փարիզ , Սեպտեմբեր 1902

[Վ Ե Ր Ձ]

## ԿՊՐՈՑԸ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

## II

Ախարգերական առողջապահութիւնը : — Ինչպէս տեսանք նախորդ յօդուածին մէջ, դպրոցը՝ տղոց իրարու հետ ուսնեցած մտերմական յարաբերութեանց ու ամէնօրեայ եւ շարունակական շփմանց կրկնակի պատճառներով, իրապէս կը նպաստէ կեղտոտ հիւանդութիւններու փոխանցման եւ համաճարակներու տարածման : Միւս կողմէ եթէ խորհինք որ դպրոց յաճախող տղաքները, երբեմն խիստ բազմաթիւ, թաղի մը զանազան կէտերէն կամ քաղքի մը զանազան թաղերէն կուգան, կը տեսնենք թէ որքա՛ն իրաւացի է կասկած իլ որ զանազան տարափոխիկ ու համաճարակային հիւանդութիւններ իրենց ժամադրավայր ունենան դպրոցը, որ իր կարգին առաջնակարգ գործօն մը պիտի դառնայ այդ ախտերու ցրուումին : Հետեւաբար որքան աշակերտները պահպանելու՝ նոյնքան աղէտքի մը ծաւալումէն խուսափելու համար, պաշտպանողական ամէն խիստ միջոցներ պէտք է ձեռք առնուին միշտ ձեռնհաս իշխանութեան կողմանէ : Մասամբ այդ բանը կախուած է այցելու բժիշկներէ, ստիպողական պարագաներու մէջ . իրենց գիտութիւնը ու իրենց վրայ ծանրացող պատասխանատուութիւնը պիտի ցոյց տան ամէն մասնաւոր հարկաւորութեան մէջ հետեւելիք ուղին :

Բայց նախզգուշական կարգ մը ընդհանուր միջոցներ կան որ մեծ մասամբ, մանկավարժական իշխանութենէն կախուած են, որոնց մասին պիտի խօսինք անմիջապէս :

Յայտնի է որ, այն ամէն պարագաներու մէջ, ուր աշակերտ մը տարափոխիկ կամ համաճարակային ախտէ մը բռնուած է — տիֆթէրի (կեղծմաշկ), կարմրախտ, ծաղկախտ, թոքախտ, — սլզաիկ հիւանդին դպրոց յաճախելը արգելելը առաջին ըլլուելիք գործն է : Եթէ կասկած կայ որ դպրոցական ինչ ինչ վայրերը հիւանդ աշակերտէն վարակուած են, պէտք է որ անմիջապէս ամբողջ դըպրոցը հականսխուելու եւ, ի հարկին, անոր ծառայած առարկաներուն, գրքերուն, տեսարակներուն, գրքչակալներուն, մատիտներուն կրակով այրուելու ձեռնար-

կուրի, որովհետև այս վերջինները իրենց կարգին կրնային վարակման գործոն մը դառնալ:

Եթէ, հակառակ ձեռք առնուած միջոցներուն, համաճարակը յառաջդիմութիւն կ'ընէ, աշակերտներու արձակումը անհրաժեշտ է, շատ թէ քիչ երկար ժամանակի մը համար, նայելով պատճառ հիւանդութեան, բայց միշտ աւելի երկար ժամանակ մը քան հիւանդութեան ծանօթ թիւութեան (incubation) տեսողութիւնը, որպէսզի, բուրբ ազոց մէջ, որ կրնային վարակուած ըլլալ դպրոցը, հիւանդութիւնը ժամանակ ունենայ երևան դալու՝ նախ քան անոնց դպրոց վերյաճախումը: Այսպէս կարելի պիտի ըլլայ խուսափիլ այն կրկնուող համաճարակներէն, որոնք երկու երեք անգամ յաջորդած են՝ յորմէհետէ աշակերտները դպրոց վերադարձած են, ու այս կրկնումները հաստատուած են տիֆթէրիի պահուն: Այն միջոցին երբ աշակերտներու արձակուողը բաւական երկար տեւած է, համաճարակը վերջնականապէս դադրած է: Իարձեալ, հասկընալի է որ դպրոցը վերսկսելուն, պէտք է որ ներկայ աշակերտները մանրագնին բժշկական քննութեանէ մը անցնին, ու ամէն կասկածելի աշակերտ բաւական ժամանակի մը համար հետու զրկուի դպրոցէն:

Սակայն, հազուադիւտ է, այսօր, ամբողջ դպրոցին արձակուողը: Յաճախ հիւանդներու անմիջական ու կանուխէն հեռացումը, իհարկին՝ այն ազաքներու, որ այս վերջիններու մերձաւորները ըլլալով կրնային հաւանականօրէն անոնցմէ վարակուած ըլլալ, ինչպէս նաեւ խիստ կերպով հականերխում մը այն վայրերու, առարկաներու կամ սեղաններու, որ անոնց ծառայած են, բաւական են համաճարակը բնաջինջ ընելու համար:

Բայց այս քիչ մը մասնաւոր միջոցներուն հետ կան ուրիշ ընդհանուր առողջապահական նախզգուշութիւններ, որ փոխանցելի հիւանդութեանց ախտարգելութիւնը անհրաժեշտ կը ներկայացնէ:

Այդ միջոցներուն մէջ պիտի յիշատակեմ ամէն կեղտոտութեանէ զերծ, մաքուր ջուրի բաժանումը դպրոցին մէջ, որ պիտի ազատ պահէ աշակերտները ջրով փոխանցելի հիւանդութիւններէ, ինչպէս ժանտառնայ, քօլէրա, թանչք (dysenterie), կարդ մը փորհարութիւններ, եւն. . . Պէտք է խուսափել որքան կարելի է դասարաններու,

անցքերու, ծածկուած զբօսարաններու մէջ փոշի հանելէ, որովհետեւ այդ փոշիները գրտէն գալով, ինչպէս տղոց կօշիկներու միջոցաւ, կրնան պարունակել ամէն տեսակ ախտածին սերմեր, ու ասոր համար կարելի է մտից դռներուն ասջեւ ռախց-սրբիչներ կամ խողանակաւոր փոխաթներ դնել, որ անոնց մեծ մասը իրենց մէջ պիտի բռնեն: Բայց որովհետեւ, հակառակ ամէն նախազուշութեան, կարելի պիտի չըլլայ անոնցմէ ամբողջովին խուսափել, պէտք է ջանալ զանոնք օդին մէջ չհանել, որուն յաճախ տեղի կուտայ աւելը: Լաւ կ'ըլլայ միշտ դիմել գրական եւ բացարձակ լուացումի մը, խոնու աւլումի մը՝ գետինը ջրով կամ աւելի լաւ եւս հականիւսիչով մը ոռոգելէ յետոյ, եւ վերջապէս սրբումի մը՝ խոնաւ լաթերով, որոնք միայն պիտի անհետացնեն բոլոր փոշիները առանց զանոնք տարածելու:

Վնասակար փոշիներու ախտարգելութեան ընդհանրապէս, եւ, աւելի մասնաւոր կերպով թերեւս, թոքախտի դէմ արգելքին կը յարակցի թքամաններու խնդիրը: Ո՞ր դպրոցին մէջ թքամանի կը հանդիպիք: (Բնականաբար հայկական դպրոցներու վրայ չէ՞ այստեղ խօսքը, ուր ամէն բան կը պակսի): Այդ պակասը խոստովանի՛լ՝ նոյն իսկ Ֆրանսայի շատ բարձր կեդրոններու մէջ, խիստ մօրմօքիչ է. չարիք մը լաւ ճանչնալէ յետոյ՝ առաջին պայմանը զայն դարմանելը չէ՞ միթէ: Հաւանական է որ տասնեակ տարիներ յետոյ երբ յաջորդող սերունդները գիտնան թքամաններու ամբողջական չգոյութիւնը Ֆրանսայի հանրային հաստատութիւններու մէջ, լիսէ, թատրոն, զբոսըց եւն., այնքան պիտի զարմանան որքան այսօր օտարոտի կը թուի երբեմն, Մեծն-Նափօլէօնի ժամանակ, Վէրսայի մէջ կանթեղներու չգոյութիւնը: (Կ'երեւի թէ բարեմիտ գասախօսը ներկան իր աչքին առջեւ չունի, այսինքն այն Ծայրագոյն-Արեւելքի երկիրը, ուր գիշերները փողոցներուն մէջ փոխանակ կանթեղի, չուներ կան): Հաստատուելիք թքամանները պէտք չէ անտարակոյս ցարդ ընդունուած սոցոսուած փայտի թեփով լեցուած փոքրիկ տուփերը ըլլան, « որոնց վրայէն կը քալենք եւ որոնց չուրջը կը թքենք » . այլ մէկ մեթո՞ր բարձրութեամբ եւ ձողառաւոր բերան ունեցող մետաղեայ գլաններ, որոնք կարելի է դիւրութեամբ հականիւսել: Լաւ կ'ըլլայ ո՞ր այդ

գլան-ամանին յատակը հականերսական հեղուկ մը դնել, ասիս ֆեկիֆ 50 %<sub>00</sub>, սիւպրիսե ֆորոգիֆ 1 կամ 2 %<sub>00</sub> կամ փեւնանկանաք սը փորաս, որոնք կրկին առաւելու թիւնները պիտի ունենան մէկ կողմէ անմիջապէս արտաթափուած թուքը հականերսել սկսելով, միւս կողմէ հեռացնելով կամ սպաննելով այն ճանճերն ու միջատները որոնք կը բնային գալ հոն եւ ախտագին սերմերը յետոյ դէպի հոռուները տարածել:

Վերջապէս իւրաքանչիւր դպրոց պահարան մը (vestiaire) պէտք է ունենայ, որ տաքցուի ձմեռը, որպէսզի անձրեւէն կամ ձիւնէն աշակերտներու թրջած արտաքին զգեստները (վերարկու, փալթօ\*) չորնան դասախօսութեանց պահուն: Իւրաքանչիւր աշակերտ ունենալու է դարձեալ իր մասնաւոր զգեստակալը (porte-manteau): Ասիկա արմատական միջոց մը պիտի ըլլար խուսափելու համար կարգ մը հերաւոր-մորթի հիւանդութեանց տարածումէն, ինչպէս յաճախ պզտիկ համաճարակի վերածուող մազաթափութենէն (pelade):

Բայց բժիշկն է որ այսպէս կանոնաւոր, դպրոցներու բժշկական յաճախ քննութեամբ, պիտի որոշէ միայն ըստ պարագային՝ այս ինչ կամ այն ինչ միջոցին կիրարկումը: Այս նպատակին հասնելու համար, անհրաժեշտ է որ բժիշկը, իր այցելութեանց միջոցներուն մէջ, մանրամասնօրէն դպրոցին առողջապահական վիճակին տեղեակ պահուի: Յորմեհետէ վարժարան յաճախող տղայ մը բռնուած է վարակիչ հիւանդութենէ մը, պէտք է որ անմիջապէս բժշկին, ներկայ թէ՛ բացակայ, իմաց տրուի, որպէսզի այս վերջինս կարենայ, ըստ հարկին եւ յարմար ժամանակին գործել: Ու այդ կանխող հսկողութիւնը եւ տեղեկա-

\*) Գաւառներու մէջ մասնաւորապէս ժողովուրդը կըրկնազգեստ չունի: Վերսօնն ու ժաֆէքը կը գործածուին ամառ ժամանակ. իսկ ձմեռը միայն խոշոր վերարկուն, որ կը ծառայէ միեւնոյն ատեն թէ բնակութենէն ներս եւ թէ դուրս: Հետեւարար վերարկուն հանելով՝ աշակերտները իրենց ժիլեով (եէլէկ) պիտի մնան միայն, այսինքն մերկ. այնպէս որ ստիպուած են դպրոցին մէջ իրենց թրջած զգեստները պահել դասախօսութեանց պահուն ալ. սովորութիւն մը որ թէ լիասակար է առողջութեան եւ թէ անյարմար կարգ ու սարքի:

տուութիւնը տեսուչին կամ տեսչուհիին պարտքն է :

Դպրոցին բարերար ազգեցութիւնը պիտի տարածուի դարձեալ դպրոցական շրջանէն անդին ալ : Դպրոցին մէջ աղուն ձեռք բերած առողջապահական մաքրութեան սովորութիւններն , պէտք է յուսալ որ պիտի ներգործեն անոր ամբողջ կեանքին ու ընտանիքին վրայ :

Դպրոցը կրնայ , նմանապէս , թանկագին սատար մը ըլլալ այն օրը , երբ պիտի ուզուի զօրաւոր կերպով կռուիլ ալքոլամոլութեան դէմ :

### III

Այս ընդհանուր տեսութեան մէջ առաջ բերուեցան այն ծանօթութիւնները , որոնք անհրաժեշտ են ամէն առնոց որ կը զբաղին տղոց դաստիարակութեամբ :

Այս ծանօթութիւններուն շատերը արդէն գիտնալու են կրթիչները ( ո՛չ հայ մականուանեալները անտարաւ կոյս) : Բայց քանի մը տարուան առաջ առողջապահութիւնը հաւանօրէն չէ այլեւս , դոնէ՛ մասամբ , այսօրուանը : Այդ գիտութիւնը կազմուած է քիչ մը շատ ուրիշ գիտութիւններէ : Իժկութիւն , բնախօսութիւն , բնագիտութիւն , քիմիա , եւայլն , անոր կ'ընծայեն նոր աջակցութիւններ եւ ամէն օր : Դարձեալ , իւրաքանչիւր օր՝ նոր կատարելագործումով մը կը բնորոշուի ան՝ այդ ճամբուն մէջ . ու ատկից է որ կը ծագի անհրաժեշտութիւնը առողջապահական բարձր կրթութեան մը կազմակերպութեան :

Ճանչնալով այն ամէն միջոցները որոնցմով կարելի պիտի ըլլայ զարգացնել տղան իր դպրոցական շրջանին մէջ , — որ շրջանն է նմանապէս անոր մտաւոր եւ ֆիզիքական ծաղկումին , — ինչպէս նաեւ այն պայմանները որ նպաստաւոր են անոր կատարեալ աճումին , ըրած պիտի ըլլանք գործ մը՝ ո՛չ միայն կորովի , կամքի տէր եւ մտացի մարդիկ արտագրելու համար , այլ եւ ստեղծած՝ երկրին եւ առհասարակ մարդկութեան յոռաճիւղմութեան եւ բարգաւաճութեան նոր աղբիւր մը :

## ԳԻՏԱԿԱՆ ԼՈՒԻՐԵՐ ԵՒ ՆՈՐՈՒԹԻՆՆԵՐ

(Տես Համալսարան, էջ 297 թիւ 9-10)

### ԳԱՊՈՅՏ ՀԱՋԻ ՄԻՐՐՈՓԻՆ և ԵԻՃՈՒԿԻՆ ԳԻՒՏԵ

48. — Ամիսներէ ի վեր, Պելճիգայի բժշկական մարմինը մեծ հետաքրքրութեամբ կը հետեւի այն փորձերուն որոնք կը կատարուին Պրիւքսէլի հիւանդանոցներուն մէջ, նոր շիճուկի մը միջոցաւ — կապոյտ հազի շիճուկը:

Այսօրորայց մասին ձեռք բերուած արդիւնքները հաստատողական են, շահաւէտ կը գտնենք մեր ընթերցողներու առջև պարզիկ պատմութիւնը այդ բարեբար պիւտին:

Երկար տարիներէ հետէ Տօք. Լէօրիօ արդէն նուիրուած է կապոյտ հազի ուսումնասիրութեան: 1893էն սկսած, հազիւ Պրիւքսէլի համալսարանը աւարտած, կ'ուսումնասիրէ կարեւոր խնդիր մը, այսինքն այն կէտը որուն վրայ ախար կեդրոնացած է (la localisation de la maladie): Ախտանիշներու եւ վէրքերու վրայ կատարած լաւագոյն դիտելութեամբ մը, գիականատութեանց արդիւնքներուն վրայ յենելով, կը յաջողի հաստատել որ հիւանդութեան սկզբնական կեդրոնացումը կը գտնուի ռնգա-ըմբանին [naso-pharynx] մէջ, ուրիշ հեղհետէ կը տարածուի զէպի շնչաուութեան գործարանին տակի մասերը: Իբր հետեւութիւն, կը հրահանգէ թէ կարելի է յաջողութեամբ աւելցնել այդ ժամանակի հիւանդութեան պարմանումի եղանակին, ռնգային փոսերու լաւապէս հականիւտում մը: Ընդունելով հիւանդութեան միջրոպային բնոյթը, կը ստուգէ արդէն ժահրերու մասնաւորապէս գրգռիչ ներգործութիւնը եւ կուտայ, ստատիկ հազի [la quinte de toux] նկատմամբ, շահագրգիռ բացատրութիւն մը:

Երկար ատեն կարծուեցաւ, որ այդ հիւանդութեան պահուն գոյացած մասնաւոր ձայնը [cri] արդիւնք էր փնկոնկասքոխի [թոքային եւ ստամոքսային ջլին] ճնշման, պրոնխներու [bronche] խուլերուն ծաւալման հետեւանքով: Մինչ, ընդհակառակը, խոչափողին [larynx] տեղական բորփոքումը եւ ժահրերու ջլային դրութեան վրայ ունեցած ցնցողական ներգործութիւնն է որ պատճառ կը գառնան այդ ախտանշին [symptôme]:

Այն վայրկեանին երբ կը հրատարակէր իր այս առաջին հատորը, Տօք. Լէօրիօ տակաւին ախտածին տարրը փնտռելու իր փորձութեանց մէջ որոշ արդիւնքի մը հասած չէր: Տքնաջան աշխատանքներու ինը տարիներ պէտք էր պնդելին որպէսզի վերջապէս Տօք. Լէօրիօ կարենար ներկայացնել՝ բացի չարագործ ցպիկէն, զայն սպաննելու ծառայող ջիւճուկը:

— Առաջին ֆօձաւորութիւնը, որուն հանդիպեցաւ, եղաւ կապոյտ հազով կենդանիները հիւանդացնելու անկաւրելիութիւնը, որոնք իրեն պիտի ծառայէին իր փորձերուն միջոցին: Անասնաբուժական գրութիւնները այդ առթիւ չունինացած են: Վահագանի այն նպատակոր պայմաններուն, որոնք պիտի դիւրացնէին մեր ընտանի կենդանիեաց մէջ կապոյտ հազի վարակումը, երբեք հաստատուած չէ որ անոնցմէ մէկը այդ հիւանդութիւնը ընդունած իլլայ:

Իր համոզումը գոյացնելու եւ այդ մասին ճշմարտութեան հասնելու համար, կապոյտ հազի պատիւը բնորոշած ըլլալուն՝ Տօք. Լէօրիօ կը յենու հետեւեալ իրողութեանց վրայ.

1. Դրապէս երեք ամբողջ տարիներ կապոյտ հազ ունեցողներու խուխը քննելով, անոր մէջ ստուգեց գրեթէ միշտ գոյութիւնը միեւնոյն միքրոպային տարրին. առանձնացուց այդ միքրոպը եւ զայն մշակեց:

2. Այդ սերմին կենդանի մշակումներէն կենդանիներու ներարկելէ յետոյ, նկատեց զանազան արկածներ որոնք ջրային բնոյթ ունէին մանաւանդ: Բաւականաչափ քանակով եւ աստիճանաւոր յարաճունութեամբ, հաստատեց հետեւեալ երեւոյթները. շնչառութեան արագացում, կծկում, մկանական ցնցում ստոծանիի, յետնակողմեան անդամներու կազմալուծում, ապա յառաջակողմեան անդամներու եւ կուրծքի մկանունքներու, անկանոն շնչառութիւն, վերջապէս մկանային կարկում եւ մահ:

3. Ժահրին ներարկումովը միայն, ստուգեց միեւնոյն հեմեւանքները, այսինքն թէ ամուլ մշակումները միեւնոյն ապիպեցութիւնը ունին ինչպէս կենդանի մշակումները, եւ թէ պատիւը չէ որ կը գործէ անձնապէս, այլ այն ժահրերը զոր ան կը պարաստէ:

4. Այն ատեն ձեռք առնելով այն եղանակները զոր կը

զործածէր Տօք. Ռու ձիերը անընդունակ դարձնելու համար կեղծմաշկի (diphterie) թոյնին դէմ, ներարկեց այդ կինդանիններու շատերուն աստիճանաբար յարածուն քանակութեամբ ամուլ մշակումներ, զոր պատրաստած էր :

Շատ մը ամիսներէ յետոյ, ձիերը բաւական կերպով անընդունակցած ըլլալով, անոնցմէ արիւն առու եւ ձեռք բերաւ շիճուկ մը որ կը կասեցնէր կապոյտ հազի պասիլին բարդաւածումը : Կինդանիները անընդունակ ըլլալով կապոյտ հազին, սկզբնապէս դժուար էր հաւատք ընծայել այս գիւտին եւ իրօք մինչեւ այդ վայրկեանը յաւակնուած իւր սեանի կը կարծուէր այդ բանին մէջ : Բայց բարերազգաբար մարդկութեան համար գիտական յառաջդիմութիւնը չի կասեցաւ՝ սղաքները վարակող միքրոպին ներկայութեան առջեւ, եւ այսպէս Տօք. Լէօրիօ արամաբանօրէն կը յաջողէր ախտին անընդունակ կինդանիին արեամբ իսկ ձեռք բերել կապոյտ հազը բժշկող շիճուկ մը :

— Յառաջ բերենք պիւճիկացի բժշկին քանի մը եղբակցութիւնները, որոնք բանաձեւուած են Պրիւքսէլի Սէն-Փիէն հիւանդանոցի բժշկապետէն : Այդ հիւանդանոցի սրահներուն մէջ իսկ էր որ առաջին անգամ կանոնաւորապէս շիճուկը կիրարկուեցաւ :

« Շիճուկը կը նուազեցնէ հազին սաստկութիւնը, անոր գործածութիւնը երբեք տեղի տուած չէ ո՛չ տեղական եւ ո՛չ ալ ընդհանուր արկածներու : Միակ ներարկում մը միշտ բաւական չէ բուժելու համար : Երկրորդ մը եւ երրորդ մը անհրաժեշտ կը դառնան եթէ ախտի կրկնում (récidive) կայ : Բժշկութիւնը ձեռք կը բերուի միջին կերպով գրեթէ տասներորդ օրը : Ներարկութեան ամէնէ յարմար վայրկեանը հիւանդութեան սկզբնաւորութիւնն է, ախտին իրազեկ ըլլալէ անմիջապէս յետոյ » :

Այս ախտաբուժական յաղթանակը բոլորովին ստացւած ըլլալ կը թուի : Բսենք քանի մը խօսք յիշեալ միքրոպին վրայ : « Լէօրիօի պասիլը » կը ներկայանայ կարճ ցպիկի ձեւով, հասարկէկ, աւելի երկար քան լայն, զգալի կերպով ձուածեւ . եւ լորձանահութեան (mucosité) մէջ կը գտնուին խմբովին՝ կազմուած բաւական բազմաթիւ տարբերէ : Շարժունութիւնը ակնյայտնի է :

Օդակենսիկ մըն է : 37° բարեխառնութեան մէջ կ'աճի սովորական մշակումներու նիւթերուն վրայ : Այդ միքրոպը

մանկութեան ամէնէն ահարկու աղէտներէն մէկն է : Վերջին տարիներու՝ կապոյտ հազը միջին հաշուով 100 մահ պատճառած է Պրիւքսէլի մէջ : Մահացութիւնը, վերջին վիճակագրութեանց համաձայն՝ 3.25 առ 100 է Պելճիգայի մէջ : Տարեկան 200է աւելի զոհ կը հաշուի այնտեղ եւ մահացիութիւնը խիստ աւելի մեծ է եթէ հաշուի առնուին նաեւ այն մահերը, որոնք կը ծագին կարգ մը հիւանդութիւններէ որ յաճախ կնճոտտելու կը ծառայեն կապոյտ հազը, ինչպէս թոքախտը եւ թոքախտին մէկ տեսակը :

Հասարակաց իշխանութեան կը մնայ ուրեմն այսուհետեւ այդ աղէտքներու դէմ հարկաւոր միջոցներ ձեռք առնել, քանի որ այլեւս գոնուած է դայն չէզոքացնելու եղանակը :

Աւելցնենք որ Տօք. Լէօրիօ հազիւ 34 տարեկան է. ընտրեալ աշխատող մըն է, հազուադիւտ յարատեւութեամբ : Ճանչնանք արժանիքը մարդուն որ, խոշոր զոհողութիւններու գէտով, անձնապէս իրականացուցած է այնքան կարեւոր դործ մը : Պատիւ մըն է այդ բանը Պելճիգայի ամբողջ բժշկական մարմնոյն եւ, մասնաւորապէս, Պրիւքսէլի ազատ Համալսարանին եւ հիւանդանոցներուն, ուր Տօք. Լէօրիօ իր ուսումը ըրած է : (Լա Ռըյիլ)

49. ԱՐԵՊԱԿԻՆ ջերմութեան փոփոխութիւնները. — Ինչպէս գիտենք, կարգ մը շրջաններ կը գտնուին արեգական երեւոյթներու մէջ : Կան վայրկեաններ, որոնք կրնան նոյն իսկ խիստ երկար տեւողութիւն մը ունենալ, ուր արեգակը աւելի տաքութիւն կ'արտադրէ. դարձեալ ուրիշ վայրկեաններ, որոնք եւս կրնան երկարիլ, ուր նուազ կ'արտադրէ : Ինչի՞ հետեւանք է այս պարբերականութիւնը : Գերման օդերեւութական մը, պ. Յ. Հան, այդ հարցով կը զբաղի իր կարգին, ուրիշ շատերէ վերջ, եւ զայն կը լուծէ յենելով գործօնի մը վրայ, որով միայն ամերիկացի աստղաբաշխ մը, Լանկլէյ, կը թուի մտահոգած ըլլալ : Այդ գործօնը արեգակին մթնոլորտն է, ու անկէ ծագող լուսաւոր եւ ջերմութիւն ճառագայթներու ձողութեան կարողութիւնը : Եթէ զրկուէր իր մթնոլորտէն՝ արեգակը մեզ պիտի զրկէր — ու պիտի զրկէր ամէն կողմ — կրկինը այն տաքութեան զոր կը ճառագայթէ : Ու, միւս կողմէ, եթէ արեգակին մթնոլորտը ձողական աւելի խոշոր կարողութիւն

մը ունենար, ճառագայթուած տաքութեան քանակը զգալապէս պիտի տկարանար: Եւ այս այն աստիճան որ եթէ արեգակին մթնոլորտին ծծողական կարողութիւնը 25 առ 100 աւելնար, երկրիս մակերեւոյթին բարեխառնութիւնը 30 առ 100 պիտի տկարանար: Խիստ հաւանական է, ըստ պ. Հանի, որ արեգակին մթնոլորտին ծծողական կարողութիւնը կը փոխուի: Երբեմն աւելի տկար է եւ երբեմն աւելի զօրաւոր ու անտարակոյս տեղի կ'ունենան անդադար յաջորդումներ որ փոխադարձաբար եւ ստիպողաբար իրարու կը յարակցին կամ զիրար կ'արտադրեն: Միւս կողմէ, արեգակին տաքութեան արտադրութիւնը կրնայ փոխուիլ, ըստ Հէլմոլտի. յայտ այս հակընդդիմութիւնը կրնայ չի շարունակուիլ, կրնայ կանխել յանկարծական փոփոխումներու: Ուրեմն, առնուազն, երկու պայմաններ կան որպէսզի արեգակին տուած տաքութեան քանակութիւնը փոխուի:

#### ՄԵՂՈՒՆԵՐՈՒ ՀԱՄԱՃԱՐԱԿ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

եւ անոր միտոպը

50. — Ինչպէս շերամները, որոնց հիւանդութեանց ուսումնասիրութիւնը Փասթէօսի նախամեծարութեան արժանացաւ, մեղուները եւս, այդ աշխատասէր միջատները, իրենց բաժինը կը վճարեն զանազան հիւանդութիւններու, որոնցմէ լոֆ [loque] կոչուած համաճարակը ամէնէ խոշոր սարսափը պատճառած է մեղուաբոյժներու:

Այդ հիւանդութիւնը ծանօթ է երկար դարերէ ի վեր, ու Ֆրանսիս Ս. Հարիսոնի ըսածին նայելով, որ հրատարակեց ամէնէ կատարեալ կենսագրութիւնը «լոֆ»ին վերայ, հիները կը սոսկային արգէն, փեթակներու այդ ճշմարիտ ժանտախտէն:

Բոլոր մեղուաբոյժները գիտեն միջոցները այդ հիւանդութիւնը լաւապէս ճանչնալու համար, որ նախամեծարութէն կը յարձակի զարգացման ճամբան մտնող սաղմերու (larve) վրայ: Դիւրաւ կը ճանչցուի, փեթակի մը մէջ, այն խցիկները որ կը պարունակեն հիւանդ սաղմեր, իրենց խփանին (opercule) ունեցած աւելի գորշ գոյնին շնորհիւ, որ ներս ճնշուած է իր կեդրոնին վրայ եւ ընդհանրապէս ծածկուած փոքրիկ պատուածքով մը, արդիւնք, ինչպէս

կը կարծուի, հիւանդ սաղմին ծոցին մէջ կազմուած կազի խուսափումին: Խփանը կարելով, կը գտնենք, գեղեցիկ եւ կենդանի սաղմի մը մէջտեղը, հեղուկի նման կոյտ մը դեղին եւ գորշագոյն-գեղին, նոյն իսկ սեւորակ հիւանդութեան աւելի յառաջացած մէկ պահուն: Այդ հիւանդ սաղմը մածուցիկ է եւ կ'արտարուի « լօք » ին յատուկ անախորժ հոտ մը: Այն նախճիրները՝ զորս կը գործէ այս հիւանդութիւնը փեթակներու մէջ, կրնան խիստ խոշոր ըլլալ:

Ամէնէն նպաստաւոր պարագաներու մէջ, երբ մեղուները խիստ զօրաւոր են, կը տեսնուի որ անոնք զը փրցնեն նրբորմէրը այն խցիկներուն որ այդ հիւանդ սաղմերը կը պարունակեն եւ կը ձեռնարկեն ամբողջական մաքրութեան մը՝ զուրս տանելով ախտադին արտադրութիւնները. քիչ վերջ անոնք կը վերաշինեն նոր խցիկներ եւ հիւանդութիւնը կը թուի կանգ առնել: Բայց երբ այս վերջինը ուժգնուպէս ծաւալի, կամ աւելի լաւ եւս եթէ մեղուները բաւական առողջ չեն, կը տեսնուի որ անոնք իրենց փեթակին արտաքին ծակին սողնու, ճըշմարտուպէս յուսահատած, խուլած վիճակ մը ունին, ու քիչ յետոյ կը հրաժարին ծաղկահիւթ հաւաքելէ: Ախտը, մեղուաբոյժներու ըսածին համաձայն, կրնայ տարածուիլ փեթակէ փեթակ եւ տեղէ տեղ: Աւելորդ է ծանրանալ այն խոշոր կորուստին վրայ որ յառաջ կուգայ « լօք » ի համոճարակէ մը փեթակներու մէջ. մեղուածուերու ոչնչացումը պատճառ կը գտնուի բնակչութեան նուազելուն, ու թագուհին, իր կողմէն, չգանելով տեղ՝ այլեւս չածեր:

Առհասարակ « լօք » ը կը կարծուի հետեւանք մասնաւոր եւ տեսակարար պասիլի մը, որ 1885ին առաջին անգամ ուսումնասիրութեան առարկայ դարձաւ: Պպ. Ուաթսոն-Շէյն եւ Շէսիբ գտան « լօք » ի սաղմերուն (larve) մէջ պասիլներ, զոր առանձնացուցին ու մշակեցին, եւ որոնց տուին պասիլիս ալվէյ (bacillus alvei) անունը: Ծանչցան որ այդ միքրոպը կ'արտադրէր սերմեր այնքան խոշոր որքան ցպիկները (bâtonnets): « Պասիլիս ալվէյ » ը կրնայ մշակուիլ դիւրութեամբ մածիտին (gélatine gélouse), չիճուկին, կաթին եւ գետնախնձորին վրայ:

Այդ միքրոպը ընդունուեցաւ անմիջապէս ամէն անոնցմէ որ կը զբաղէին մեղուաբուծութեամբ: Զայն կը նկատեն իբր պասիլ մը, որոշուպէս տեսակարար, իրապէս

ախտածին, այնքան՝ որքան ժանտախտին եւ քօլէրային պատելները մարդկային ցեղին մէջ, արշաւելով սաղմերու վրայ՝ դուրսէն փեթակին մէջ բերուելէ յետոյ, արտաքին ճշմարիտ վարակումի մը պէս :

« Լօք »ը դադրած չէ մտազգաղեցնելէ մեղուաբոյժները եւ առարկայ դառնալէ անոնց թերթերուն եւ համաժողովներուն մէջ կրքոտ վիճաբանութիւններու . այնպէս որ Ուաթսոնի եւ Շէսիրի միջբրոպարանական ուսումնասիրութիւնը հետի է լուծած ըլլալէ կարգ մը կէտեր որ այդ հիւանդութեան պատճառագիտութիւնը կ'ակնարկեն : « Լօքային » համաճարակներու վրայ կատարուած բազմաթիւ գիտողութիւններ, համաճարակներ՝ որ առաջ եկած են առանց միբճաւորական վարակումի, չեն ստանար դոճացուցիչ մեկնաբանութիւն մը՝ եթէ ընդունինք պասիլիւս արվիշի բացարձակ տեսակարարութիւնը :

Դարձեալ, 1900ին, Մէօզի աւազանին մեղուաբուծական Ընկերութիւնը խնդրեց վարկի բացում մը Պելճիգայի երկրագործական նախարարութեան, ինպստ Լիէժի համալսարանի միջբրոպարանական Էնսրիքիին, « Լօք »ի վրայ նոր գիտական ուսումնասիրութիւն մը կատարելու համար : Այդ վարկը շնորհուեցաւ, ու պ. Մալվոզ, Էնսթիթիւի անօրէնը, պաշտօն յանձնեց պ. Լապօթի մասնաւոր խուզարկութիւններ կատարելու համար :

Ուսման հարկաւոր գործիքները անմիջապէս անոր արամադրութեան տակ գրուեցան, շնորհիւ այն հրաւերներուն որոնք ուղղուեցան մեղուաբոյժներուն մասնաւոր թերթերու միջոցաւ : « Լօք »ի բազմաթիւ տեսակեր, որոնք կը հասնէին երկրին այլազան կողմերէն, պ. Լապօթի յանձնուեցան :

Այս վերջինը իր ուսումնասիրութիւնը կը հաղորդէ Էնսրիքի Փասքոնի Տարեգիրքերուն (1902) վերջին ժամանակներու մէջ : Այդ աշխատութեան կզրակացութիւնները հետեւեալներն են :

Պասիլիւս արվիշը, որ Ուաթսոնէ եւ Շէսիրէ նկարագրուած է մեղուներու հիւանդութեան իբր տեսակարար գործօնը, ուրիշ բան չէ եթէ ոչ բնութեան մէջ խիստ շատ տարածուած սովորական միջբրոպներու մէկ տեսակը, այսինքն պասիլիւս մեզանքեռիքիւս վիւլիարիւս :

Իրողութիւնը, թէ այս սովորական միջբրոպները կըր-

նան դառնալ լուրջ հիւանդութիւններու գործօնները, հաստատուած է առաջին անգամ Փասթէօնէն, ճիշդ իր շերամի հիւանդութիւններու հեղինակաւոր ուսումնասիրութեանը մէջ, որ այնքան համանմանութիւն ունի մեղուներու «լօք»ին հետ: Փասթէօն կատարելապէս նշանակած է թէ շերամները կրնան հիւանդանալ, ո՛չ միայն ֆօսփիւսֆիլիներու (հիւլէ) յարձակումի մը հետեւանքով, խիտուածանաւոր սերմեր, այլեւ այն տանն երբ գէջ սնած եւ գէջ խնամուած ըլլալով, իրեց հիւսկէնները չեն կարող գիմազրել իրենց մարտդական խողովակին պատիւներու արշաւանքին գէմ:

Պատիլիւս մեզանքեռիֆիւսը կը գանուի առողջ փեթակներու մէջ, որքան մեղրատու խցիկներուն այնքան ալ մեղուներու ազիքներուն պարունակութեան մէջ: Կ'արտադրէ սաղմերու մէջ իր բազմանալովը «լօք»ին յատկանշական խանդարումները:

Այս ծանօթութիւնները, փորձնական հաստատութիւններու վրայ հիմնուած ըլլալով, պէտք է որ մեղուաբոյժներու մասնաւոր ուշադրութիւնը հրուիրեն:

Անտարտիկոյ կարելի չէ դանց առնել երբ «լօք»ը կ'երեւի փեթակի մը մէջ, պատիլին դուրսէն դալը՝ կամ մեղրահաւաք մեղուներու միջոցաւ, — որոնք շփուած ըլլան «լօք» ային հիւանդութիւն ունեցող փեթակի մը մեղուներուն, — կամ այն մեղրամամին՝ որ ծառայած է արուեստական կարգեր շինելու՝ պարունակելով սերմեր որ կը ծագէին հիւանդ փեթակէ մը:

Բայց մեղուաբոյժը միշտ գուրտերը փնտուելու չէ իր գործաւորներու հիւանդութեան պատճառները, ու ամբաստանելու դրացիները՝ պատճառ սպէտքին զոր կը ստուգէ իր փեթակատան մէջ: Ինչպէս շերամներու հիւանդութիւնը, «լօք»ն ալ յաճախ կը յառաջանայ աննպաստ պայմաններէ, որոնք տակաւին լաւ ճշդուած չեն, ճշմարիտ է, բայց որոնց իրականութիւնը անաարակուսելի է փեթակին եւ իր բնակիչներուն սնունդի եւ առողջապահութեան մէջ:

Ուրեմն ամէն բանէ առաջ առողջապահական պայմաններու գործադրութիւնը պէտք է ըլլայ, իրենց բոլոր պահանջներուն մէջ, մեղուաբոյժին մտահոգութիւնը:

Անկասկած, համաճարակի պահուն, այդ բանը պէտք է արմատապէս վարակման վառարանը չէզոքացնէ. պատի-

շիս մեզանք չեմք իրաւ սերմին խիստ ծանօթ մեծ դիմադրութիւնը՝ քիմիական գործօններու դէմ — ինչպէս ֆօռնաշինի, սիւպիւնի, սպիտակ ֆէնիլի եւ առհասարակ գործածւած հականերխններու դէմ — պէտք է այդ նիւթերը գործածելէ հետո պահէ մեղուարոյժը, իբր երեւակայական արդիւնքներ արտադրողներ եւ ընդունիլ տայ միակ ազդեցիկ միջոցը, կրակով ոչնչացումը վարակուած փեթակներու :

Բայց « լօք »-ը չպիտի անհետանայ փեթակէ մը, հիւանդ սազմերու բոլոր սերմերը եթէ ջնջուած ալ ըլլան, եթէ խտաւու ուշադրութեան չառնուի մեղուարուծական առօջապահութիւնը. պասիշիս մեզանք չեմք իրաւ այնքան տարածուած է բնութեան մէջ, որ վերստին պիտի արշաւէ փեթակին այնքան փափուկ սաղմերուն վրայ եթէ այս վերջինները իրենց վարգոցման անհրաժեշտ պայմաններու մէջ գրուած չըլլան :

## ՎԵՐՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՀԱՅԵՐԷՆ ԳՐԲԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

Բժշկի Զրոյցներ N° 5, 6 եւ 7. — Բժշկ. Վահան Արծրունի՝ ժողովրդային առողջապահութիւնը կէտ նպաստակի ընտրած, իր գիտական գրքոյկներու շարքը կը շարունակէ միեւնոյն կտանգով եւ յարատեւութեամբ: N° 5 գրքոյկը (Գողգոթի կամ մալարիա) գործնական գեղեցիկ ծանօթութիւններ կուտայ, դողացնող կամ ընդմիջող ջերմին վրայ: Կը բացատրէ թէ ինչպէս ճահճային վայրերը մասնաւոր կերպով կը նպաստեն այդ հիւանդութեան տարածման եւ թէ՛ ինչ գործօններու միջոցաւ այդ ճահճային վայրերու օղը արիւնը կ'ապականէ, անոր հաղորդելով ջերմի թոյնն ու պատելը: Կը խօսի մեծիւրի (մոծակ) կատարած դերին վրայ, որ մեծ քանակութեամբ կը պանուի ճահճային վայրերու մէջ եւ որուն խայթոցը գրեթէ միշտ ջերմ կը յառաջացնէ:

Ու ջերմէն պաշտպանուելու համար հետեւեալ խոր-

հուրդները կուտայ. 1. չորցնել ճահիճները, մթերները անյայտացնելու համար, 2. բարձր դիրքի վրայ բնակարաններ ունենալ, խոնաութենէ զերծ մնալու համար, որ մասնաւորապէս կը նպաստէ ջերմի ճարակումին, 3. ճամբորդները, որոնք ճահճային վայրեր ստիպուած են մնալ, պէտք է կրակ վառեն, ինչ որ կը փախցնէ մթերները, 4. պէտք է խմել թարմ ու մաքուր ջուր, եւ այլն: Բժշկելու համար, հիւանդը պէտք է տաք պահել՝ ոտքին տակ ու կողքերուն քովը շիշերով տաք ջուր քնելով կամ տաք խիւր զետեղելով անկողնոյն մէջ: Երբ տաքութիւնը սկսի ընդհակառակը պալ խմելիք պէտք է տալ. երբ քրքրախնքը սկսի՝ հանգիստ թողուլ հիւանդը եւ սպիտակէզէնը փոխել երբ բոլորովին հանգարած է ան: Սիւլփարոն (խիւնա) հիւանդի հոսակին նայելով օրական պէտք է տալ 5, 6 եւ 10 կրամ: Դեղը առնելու է ջերմը երեւնալէն առաջ:

Տեւական ջերմի դէմ միակ դարմանը օգտփոխութիւնն է եւ լաւ սնունդը, որոնց պէտք է ընկերացնել մկնդեղ եւ երկաթ, բայց այս վերջինները բժշկի խորհրդով:

№ 6 Գրքոյկը (ինֆլուէնցա կամ նոր ցաւ) այնքան գեղեցիկ մէթոտով մը պատրաստուած է որքան առաջինը: Միեւնոյն պարզ եւ ընտանի լիզուն, միեւնոյն մոտերմական խորհուրդները: Ինչպէս ջերմը՝ « ինֆլուէնցան » ալ վարակիչ է. բայց այնքան՝ զօրաւոր որքան քութէշը, քոլէրան, կարմրախտը, եւ այլն: Այդ հիւանդութիւնը երբեմն համաճարակի նման երեւան կուզայ եւ կը տեւէ 2 էն առաւուսին 2 1/2 ամիս: Վարակուողը նախ սարսուռ կը զգայ եւ ողնաշարային տկարութիւն. յաճախ կ'ունենայ գլխու ցաւ, հարբուխ եւ մինչեւ իսկ յօդացաւեր: Ամբողջ մարմինը ջարդուած կ'ըզգայ, սիրտը սրագ կը բաբախէ եւ շնչառութիւնը կը ծանրանայ: Տաքութիւն ունի հիւանդը մինչեւ 39-40° աստիճան, որ երկար չի տեւեր բարեբաղդաբար, 1 կամ 2 օրէն նուազելով: Երբ հիւանդը քանի մը օրեր առողջ կ'երևի ու յանկարծ կը հիւանդանայ վերստին, պէտք է բժշկին դիմել անմիջապէս՝ որովհետեւ ուրիշ նոր հիւանդութիւններու բարդուելուն հետեւանքն է այդ կրկնութիւնը:

Հիւանդը խնամելու համար քնել զայն տաք, մաքուր եւ օդաւէտ սենեակի մէջ. կերակրել զայն կաթով եւ եթէ տաքութիւն ունի պալ խմելիք տալ, յիւսնաս օրինակի

համար : Քրտոնցնել հիւանդը առանց զայն չարչարելու , տաք ջրի շիշերով կամ անձնաս տաք խմելիքներով , թէյ օրինակ : Նիւար կամ տարիքոտ հիւանդներուն շատ քըրտինքը հարկաւոր չէ : Սիւլֆաք սը ֆիւնիւնը կարելի է գործածել օրական 5-6 կրամ միայն , այս հիւանդութեան պահուն ալ :

№ 7 Գրքոյկը կը հրամայէ « Մի՛ Միւր » : Այդ յաջորդն է միւսնոյն բժշկի առաջին պատուիրանքին՝ « Մի՛ նմիր » ին : Կը խօսի ծխախտի թունաւորիչ յատկութիւններուն վրայ : Միախտը կ'ազդէ մարդու գիմական արտայայտութեան վրայ ու անոր ազեղ երեւոյթ կուտայ : Յաճախ կը սեւցնէ ակունքերը : Առիթ կուտայ հազի եւ մըշտնջնական հարբուխի , հեռեւաբար դժուարաշնչութեան : Ջղային հիւանդութիւններ ալ պակաս չեն ծխողներու վըրայ , ինչպէս նաեւ սրտի բարխման եւ մարտողական անկանոնութիւններ : Յաճախ , թոքերու անդազար դըրգըման հետեւանքով , թոքախտ ալ առաջ կը բերէ : Տեսողութիւլը կը տկարանայ եւ երբեմն կատարեալ կուրութիւն ալ կը պատահի :

Բժիշկ մը քննութիւն բանալով 1300 ծխողներու վըրայ՝ գտած է որ անոնցմէ 1ը սկսած է ծխել 6 տարեկան հասակէն . 9ը՝ 7 տարեկանէն . 10ը՝ 8 էն . 15ը՝ 9 էն . 31՝ 10 էն . 23ը՝ 11 էն . 35ը՝ 12 էն . 46ը՝ 13 էն . 100ը՝ 14 էն . 193ը՝ 15 էն . 123ը՝ 16 էն . 121ը՝ 17 էն . 122ը՝ 18 էն . 69ը՝ 19 էն . 90ը՝ 20 էն . 70ը՝ 21 էն . 107ը՝ 22 էն : Այս տարիքէն յետոյ ծխողներու թիւը հասակին հետ կը պակսի :

Այդ գրքոյկները որոնք չնչին գներով կը ծախուին (№ 5ը՝ 5 կոպէկ . № 6ը՝ 3 կոպէկ եւ № 7ը՝ 5 կոպէկ) , ստանալու համար գիմնու է՝ M<sup>r</sup> le Docteur Vahan Arzerouni, Tiflis (Russie) :

ՊԱՏԱՆԻ . — Վերջերս « Պատանի » անունով ողորմելի պարբերական հրատարակութիւն մը սկսուած է զրկուիլ խմբադրութեանս , Լոնտոնէն , եւ ինչպէս կը հաւաստեն հին ըողոքական պատուելիէ մը :

Ի հարկէ պատիւ մը ըրած պիտի ըլլայինք այդ « Նուրի » կտորին , եթէ զիջանէինք քննադատուել անոր անիմաստ բովանդակութիւնը , որ կ'արտացոլէ անոր խմբագրին մտքի հիւանդ գատարկութիւնը : Պ. Թումանեան , այդ

բողոքական հին պատուելին, երբեմն լաւ անուն մը կը վայելէր մեր մէջ: Բայց այսօր, ինչպէս կ'երեւի այդ « չուլի » կտորը կը հրատարակէ յանուն հաստատութեան մը որ « որբանոց » կը կոչուի եւ որ հազիւ թէ գոյութիւն ունեցած է: Ի՞նչ է այդ խաղը. ջանանք հասկնալ: Այդ մարդն ալ արդեօ՞ք իրեն ուղղուած քիչ մը համակրութեանէն դիմուցած մեր գլխին պատուհաս մը դառնալու ըստ պառնալիքը կ'ընէ, ստուարացնելով միեւնոյն ցնորքէն արդէն արբշիւ մեր « ազգային — դատար կուսութիւններու գեղածիծաղ ! դասակարգը »:

Այս պոթիւ շահաբերիւ կը գտնենք ըսել քանի մը խօսք այն հայկական խախտութեան մասին, որուն առաջին դերակատարը հանդիսացաւ պ. Թումանեան, վերջերս, Փարիզի մէջ:

Այդ մարդը իր ազգասիրական պարտքը ամբողջովին կատարելու համար (խէրը տեսնայ), քանի մը տարի առաջ որբանոց մը կը բանայ Լոնտոնի մէջ: Որբանոցին պէչ մասակարարութիւնը, ինչպէս գրեցին կարգ մը հայ թերթեր, պ. եւ Թումանեանի շափազանց շահամոլութիւնը պատճառ կը դառնան որ որբերը հեռանան եւ որբանոցը փակուելու մասնուի: Որբանոցին գոցուիլը պ. Թումանեանի հաշտոյն չէր գար սակայն: Վերջերս որբեր բերել կուտայ Կովկասէն, Վեհ. Հայրապետին արտօնութեամբ, իբր թէ:

Դեկտեմբերի սկիզբները՝ որբերը Փարիզ կը հասնին արգահասելի վիճակի մը մէջ, ոտքերնին գրեթէ բոպիկ ու պատառոտուն զգեստներով: Փարիզի մէջ հանգստակութիւն ընելու կը ձեռնարկուի՝ խեղճերուն ճամբու ծախքը մինչեւ Լոնտոն հոգալու համար: Այդ պահուն մէկ քանի Հայեր, մասնաւորապէս պ. Միհրան Գալփաքճեան, որբերուն ըսցառիկ ծառայութիւն մը մատուցանելու համար, կը դիմեն Փարիզաբնակ պ. Էջնաբանին եւ անոր ուշադրութիւնը կը հրաւիրեն անոնց վրայ: Պ. Էջնաբան կը խոստանայ պ. Գալփաքճեանին՝ որբերուն ամբողջական խնամքը ինք ստանձնել եւ այդ վայրկեանէն կը վարձէ անոնց համար բնակարան, ցոյց կուտայ ճաշարան, օրը երկու անգամ լիուլի կերակրուելու համար, ինչպէս նաեւ ոտից ցգլուխ մաքուր զգեստներով կը հագուեցնէ զանոնք: Իրաց այս վիճակին մէջ Փարիզ կը հասնի Թումանեան պատուելին եւ կ'ուզէ այս անգամ իր իսկ ծախքով որբերը,

Թուով 18, Լոնսոն փոխադրել: Ի զուր կը դիմուի Պատ-  
 ւելիին որ հրատարի այդ գաղափարէն: Կոչում կ'ըլլուի  
 նոյն իսկ իր որբասիրական զգացումներուն եւ ճիգ կը  
 թափուի համազել զինքը թէ պետք էր օգտուիլ պ. Էջնա-  
 եանի բարի արամադրութենէն, որով այս վերջինս յանձ-  
 նառու կ'ըլլար որբերու թիւը 20ի բարձրացնելով նախ  
 կըթել զանոնք եւ յետոյ զեղեցիկ սպազայ մը պատրաս-  
 տել անոնց:

Պ. Թումանեան այդ ատեն կը պահանջէ 7000 ֆրանք (sic),  
 որբերը պ. Էջնաեանի հովանաւորութեան տակ թողու  
 համար իբր թէ զանոնք Կովկասէն մինչեւ Փարիզ փոխադ-  
 րելու համար այնքան ծախսած ըլլար: Այս վերջին առա-  
 ջարկով Թումանեան պատուելիին հոգիին ամբողջ սեւը կը  
 մերկանայ, ինչ որ կը մղէ մեր Փարիզաբնակ ազգային-  
 ները՝ հեռու պահել որբերը անոր հասուցութենէն:

Այդ պահուն Թումանեան կը դիմէ ֆրանսական դատա-  
 րանին, ու կը բողոքէ պ. Մխաբ Տէր-Միքայէլեանի դէմ,  
 իբր թէ առեւանգած ըլլայ որբերը եւ կը պահանջէ ոստի-  
 կանապետին եւ զինուորական ուժի օգնութեամբ որբերուն  
 իրեն յանձնուելը: Ապառոզը գիտաւորութիւններով լե-  
 ցուն յօդուած մըն ալ հրատարակել կուտայ Փարիզի  
 « Ժուռնալ » օրսթերթին մէջ, որուն մէջ խնդրին կրօ-  
 նական գոյն կը ջանայ տալ՝ ներկայացնելով պ. Մխաբ  
 Տէր-Միքայէլեանը յոյն կաթողիկ (?) մը, որ իբր թէ որ-  
 բերը առեւանգած ըլլայ, զանոնք բողոքականի մը ձեռ-  
 քէն ազատելու համար: Բայց ինչ որ ճշմարիտ է՝ պ. Մ.  
 Տէր-Միքայէլեան կրօնական խնդիր յարուցած չէ դատա-  
 րանին առջև՝ այլ պարզապէս ըսած է որ պատուելի Թու-  
 մանեան « որբանոց չունի, հայ թերթերը այդ երեւակա-  
 յական հաստատութեան դէմ կը բողոքին ամէն օր եւ պ.  
 Պատուելին այդ անպաշտպան սղաքները չհակործնելու  
 նպատակաւ Լոնտրա կը տանի »

Փարիզի հոգեւոր Հովիւր, Տ. Վասիլապուն Քահանան  
 դատարան կը կանչուի, որուն հոգեւոր բարձր իշխանու-  
 թեան Փարիզի ներկայացուցիչը ըլլալուն դէմ կը բողոքէ  
 Պատուելին: Դատարանի նախադահը Տէր Հօր խնամոց կը  
 յանձնէ որբերը՝ մինչեւ Վեհ. Հայրապետէն պատասխան  
 մը հասնիլը, որբերու որու յանձնուելը վերջնականապէս  
 որոշելու համար:

Պատուելին ձեռնունայն կը վերադառնայ Լոնտոն :  
 Հոս քանի մը պարզաբանութիւններ : 18 ը որբերուն  
 առաջին անգամ այցելելուն , հաստատ աղբիւրէ մը սեղե-  
 կացանք , որ պատուելի Թումանեան բողոքականութիւն  
 քարոզած է եւ հրաւիրած է զանոնք իրեն հետեւել : Դար-  
 ձեալ 9 ը տարեկան որբի մը — ես « փոթ » չեմ ըլլար ,  
 Պատուելի՛ — բացագանչիլը ամէն ոք գիտէ Փարիզի մէջ :  
 Նմանապէս 18 որբերու միայն 9 ին ճշմարիտ որբեր ըլլա-  
 լուն վրայ որ եւ է կասկած չկայ այսօր : Կարծեցեալ 9 ը  
 որբերու մասին հասած տեղեկութիւններ՝ անոնց բողոքա-  
 կան ծնողքներու պատկանիւն հաստատելու բնոյթը ու-  
 նին : Այդ ծնողք ունեցող որբերու 5 ը արդէն Պատուելիին  
 յանձնուած են , այս վերջինին դասարանի գիմնէյն առաջ :

Պ. Թումանեանի բարոյականը . — Եթէ այդ մարդը իրօք  
 որբատէր մըն էր , թողունք մէկ կողմ իր ազգասիրութիւ-  
 նը , ինչո՞ւ իր կարգին պ. էքնաեանի բարեացակամ տը-  
 րամաշրութիւնը չի քաջալերեց անձախ , ուրիշ որբեր  
 բերել տալու ձեռնարկելով , այս անգամ , իր որբանոցին (!)  
 համար : Եթէ անպատճառ որբերը ունենալ կ'ուզէր՝ ինչո՞ւ  
 7000 Ֆրանքի գումար մը իրեն տրուելու առաջարկը բրաւ՝  
 որբերէն հրատարելու համար : Զմայլելի առեւտուր . . .  
 գերեզմանութեան նրբացած եղանակ մը : Զէ՞ որ որբերը  
 ուրկէ անցած են դրամ հաւաքած են . ու այդ հաւաքում-  
 ներուն ամբողջական գործածութիւնը արդէն զանոնք այ-  
 լապէս մաքուր վիճակի մը մէջ Փարիզ հասցնելուն լիովին  
 պիտի բաւէր : Փրանս. դասարանի գիմնէյով ի՞նչ կը մտա-  
 ծէր այդ բողոքական Գարոզիչը . եթէ ոչ առիթը գտնել  
 իր « խէրը սեսած » բողոքականութեան թոյնը թափելու  
 մեր ամբողջ ազգին գլխին , զայն ներկայացնելով մոլե-  
 ոանդ մողովուրդ մը , ուրկէ պիտի խրոչէր անտարակոյս  
 եւրոպացի բողոքական դասակարգը :

Շատ տխուր է պատռելի Թումանեանին բարոյականը :  
 Այս առթիւ յիշենք որ պ. Թումանեան առաջինը չէր որ  
 ազգային խնդրով մը Ֆրանս. դասարանի կը գիմէր : Իր  
 նախորդները ունեցած էր քանի մը ամիս առաջ , ատոնցմէ  
 մէկը վերջերս սոսկալի թոյն մը կը թափէր պ. Թումա-  
 եանի գլխուն հրապարակապէս եւ կը զարմանար թէ ի՞նչպէս  
 այս վերջինը « մեր կեղտերը մեր մէջ լուալու » սկզբունքին  
 դէմ մեղանչած էր : Այդ գիտողի զայրոյթը ուրախութեամբ

կ'արձանագրենք, ու այդ երեւոյթին մէջ կը տեսնենք պարոնին իր « սխալը ճանչնալու » առաջին քայլը, որ կ'իտովին ուղղուիլ ըսել է : Դասը զգաստացուցիչ էր : Միեւնոյն զղջումի արցունքները կը սպասենք պատուելի թումանեանէն :

ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ « Մուրճ » ի վրայ. — Թիֆլիզէն նամակներ ստացանք որ գրուած էին այդ քըննադատութեան ազգեցութեան տակ : Այդ նամակագիրներէն մին՝ « շատ լաւ » գտնելէ վերջ մեր քննադատութիւնը, կ'աւելցնէ. « Այն պարբերութիւնը թէ՛ — Մի՞թէ պատուարժան խմբագիր, երեւակայութեամբ ապրող խելագարին ու ձեր մէջ վանազանութիւն կայ — ուղղակի պատիւ է բերում ձեզ, որ չնայելով հեռու էք, չնայելով որ ձեզ ոչ ոք ոչինչ չէր լինել գրած, բայց եւ այնպէս կարողացել էք ըմբռնել, որ « Մուրճ » ը խմբագրողը հոգեկան հիււանդ, կամ ինչպէս ձեզ որոշել էք՝ երեւակայութեամբ ապրող խելագար է : »

Պ. նամակագիրը որ դիտող, խոհուն եւ համեստ գրասէր մըն է կը բորբոքի թէ « Ի՞նչ ասել կ'ուզէ որ « Մուրճը » ձեզ կը պատասխանէ եւ այն շատ թունդ-թունդ հայհոյանքներով ու լուտանքներով . . . »

Գալով պ. Ա. Ահարոնեանի հետեւեալը կը գրէ մեզ միեւնոյն նամակագիրը. « Մեր, տեղիս գրականութեան մէջ այնպիսի ամայութիւն է տիրում, որ Ահարոնեանը աչքի ընկնող երեւոյթ է կազմում . . . » : Այդ չարաբաստիկ հաստատութեան առջեւ պ. Ա. Ահարոնեանի նկատմամբ մեր վերապահումները իրենց ամբողջ գոյութեան իրաւունքը կը գտնեն, ու իր կասկածելի լուսութիւնը մեր դէմ եթէ այդ վերջինը խզէ ալ, մենք իր վրայ մեր թաղմանականն ու դամբանականը այդ երկրորդ հաստատութեամբ վերջացուցած կը նկատենք :

« Մուրճ » ի խմբագիրը, ինչպէս գիտենք, պ. Լեւոն Սարգիսեանն է եւ անոր օգնական խմբագիրը պ. Աւետիս Ահարոնեանը :

Ա՛լ դատեցէք . . . :

ՍՈՒՏ ԼՈՒՐԻ ՄԸ ԱՌԹԻՒ. — Յաճախ ստիպուած կ'ըլ-

լանք հակառակ մեր զգուանքին, ունելիով բռնել աղբանոցներու բնակիչներ ու զանոնք անդամահատել անոնց կատարած դերը աւելի լաւ ճանչնալու համար: Բայց այդ կեղտոտ անասունները ուսումնասիրելով է որ գիտութիւնը այսօր հասած է եզրակացութիւններու, որոնք ոչ միայն մարդկային առողջութեան պահպանումին թանկագին ծառայութիւններ մատուցած են, այլ եւ ընկերային նոր բարոյականի մը հիմերը դրած են, մարդկութիւնը մարմնապէս բուժելէ յետոյ, բարոյապէս ալ զօրացնելու համար:

Գիտնականին նշարակի դերը կը կատարէ երբեմն հրապարակագրին դրիչը: Այս վերջինն ալ ստիպուած է հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել յաճախ ու կրկնակի անգամներ անձերու եւ անոնց շահատակութիւններու վրայ, որոնց անուան յիշումը իսկ բաւական է հրապարակագրին շարթիւներով արորժակը փախցնել:

Փարիզի մէջ Հայու մը ձեռքով բայց ֆրանսերէն լեզուով հրատարակուած ամսաթերթի մը մէջ վերջերս կարդացինք հետեւեալ ծիծաղաշարժ լուրը. « Հաճոյքով կ'իմանանք որ Բանասերի հրատարակիչը օգնական-գասախօս (répétiteur) նշանակուած է հայերէնի գասընթացքին: Իր հայ ըլլալու յատկութեամբ մեր եռանդոտ հայրենակիցը պ. Մէյէի դժուարին դերը զիւրացնելու կանչուած է: »

Պ. Մէյէ Փարիզի Արեւելեան Լեզուաց Վարժարանի հայերէնի գասախօսն է. ու ըստ այդ լուրին պ. կարապետ Բ. ը անոր répétiteur նշանակուած է:

Այդ լուրը հրատարակողին անկեղծութիւնը կասկածի տակ դնել չենք ուզեր: Մարդիկ կան որ անպատճառ ծառայութիւն մը մատուցանել կուզեն իրենց եռանդոտ (sic) հայրենակցին ու այդ ծառայութիւնը հող չէ թէ մատուցանեն սխալ եւ սուս լուրով մը:

Եթէ այդ սխալը կամ սուտը կ'ուզենք ճշդել որովհետեւ անոր ետին կը տեսնենք հասարակութեան հաւատքը շահագործելու սահմանուած մեքենայութիւն մը՝ կազմ ու պատրաստ:

Գուցէ վաղը այդ ոգիով բան մըն ալ ինքը՝ Բանասերի կալուածատէրը, հրատարակելու — եթէ ցարդ հրատարակած չէ — յանդգնութիւնը ունենայ (ի՞նչ բան

կարելի չէ սպասել այդ հնազէտէն կամ հնա . . . կարկատէն) :  
Ուշադրութի՛ւն սակայն : Հայերէնի ճիւղը արդէն որ  
եւ է կարեւոր նշանակութիւն մը չունի Արեւելեան Լեզ-  
ւաց վարժարանին մէջ , ու եթէ անոր վրայ կը խօսուի  
այսօր , այդ բանը շատ սահմանափակ ջանքերու արդիւնք  
է , ու հայերէնի բնմի մը գոյութեան դէմ այսօր իսկ բո-  
ղոքողներ պակաս չեն կարեւոր Ֆրանսացիներու մէջ : Այն-  
պէս որ Արեւելեան Լեզուաց վարժարանի վարչութիւնը  
խոշոր գոնողութիւն մը կ'ընէ արդէն պ . Մէյէյին , այդ  
բնմի գոյութիւնը թոյլատրելով : Կը հետեւի ատկից պար-  
զապէս որ հայերէնի համար օգնական դասատուի մը ո՛չ  
միայն պէտքը չկայ այսօր , այլեւ ապագային ալ՝ ու եր-  
բեք , եւ ինչո՞ւ :

Բայց ո՞ւր է խաղը , պիտի հարցնէ ընթերցողը : Պ .  
Մէյէ որպէսզի բուն հայերէն հնչումը լեզուագիտութեամբ  
զբաղող Ֆրանսացիներու ցոյց տայ՝ Բանասերի կալուածա-  
տէրը կանչած է այդ դերին :

Պ . Մէյէ զո՞վ աւելի արժանաւոր կրնար դատել այդ  
թութակի դերին՝ քան Բանասերի հրատարակիչը :

Ահա ամբողջ օգնական-դասատուի պաշտօնը :

Հայագրի միակ օգնական-դասատուն , Արեւելեան Լեզ-  
ւաց վարժարանին մէջ , մեր համակրելի հայրենակից պ .  
Միհրան Գալփաքճեանն է : Ու օգնական-դասատու կամ  
répétiteur ըսելով պէտք է հասկնալ ուղղակի փոփոխորդ :  
Այդ պաշտօնին համար լիուրի վճարում կայ :

Սա Կ . Բասմաջեանը ի՞նչ կը ստանայ իր թութակի  
դերին համար . . . Մէկ բան մը՝ իր խաբած հայ հանրու-  
թեան բարեմոյն տրամադրութեան նիւթական քաջալե-  
րութիւնը : Զգուշութի՛ւն . . . :

Զըլլա՛յ որ այդ լուրը հրատարակողը միեւնոյն սխա-  
լանքին մէջ ինկած ըլլայ , որուն մէջ փորձեց երբեմն  
ձգել պ . Կ . Բասմաջեանը մեր հանդէսի խմբագիրը : Այս  
վերջինին կը դիմէ Կ . Բասմաջեան՝ Յ-4 տարի առաջ ,  
կանխաւ գրած յօդուածով մը , անոր բառ առ բառ հրա-  
տարակումը խնդրելով Պոլսոյ « Բիւզանդիոն » թերթին  
մէջ , որուն Փարիզեան աշխատակիցն էր Միսաք Պաղտա-  
սարեան :

— Յօդուածին պարունակութիւնը ընդհանուր գծե-  
րով . — Պ . Կ . Բասմաջեանը , « գիտնական » ը , « բանասէ-

րը», « բեւեռագէտը» . . . անօրի է՝ Փարիզի մէջ: Անօթ նուպար փաշային որ ասանկ արժանաւոր մէկու մը (մուրացկանի մը) չօգնե՛ր եւ մակաբոյժներու գրամ կուտայ» . . . !

Այդ սգիով յօգուած մը կամ աւելի ճիշդ եւս կոչ մը հրատարակուեցաւ կարծեմ 1900 ին՝ Թիֆլիզի «Նոր-Դար» ին մէջ: Հաւանականաբար ցուցա՛նդէս գալու պատրաստուող հարուստ հայերու գութն ու գորովը դէպի պ. Կարապետը կանխաւ հրաւիրելու համար գրուած յօդուած մը՝ հաճոյակատար պարօնի մը կողմէ . . . ! ?

Իրաւամբ՝ իր այդ մասնագիտութեան մէջ, խիստ հըմուտ է եւ նրբացած, մեր անկարելի բեւեռագէտը:

**ՔԱՐԹ-ՓՈՍԹԱԼՆԵՐՈՒ ԳԵՂԵՑԻԿ ՀԱՒԱՔԱՄՈՅ ՄԸ . —**  
Ռուսճուքէն մեզ զրկուած է ինը հատ տեսակաւոր ֆարս փոսթալներ, որոնց վրայ լուսանկարուած են մեր ազգային նշանաւոր գործիչներու եւ անճնաւորութիւններու պատկերները:

Այդ հաւաքածոն իր տեսակին մէջ նորութիւն մըն է մեզի համար, ու գաղափարը զոր ունեցած է զանոնք արտադրողը՝ բնատիպ է եւ դովելի:

Հրատարակիչը քաջալերելու համար աւելորդ է հրաւէր կարգալ, որովհետեւ զանոնք գնելը հաճոյալի ծախք մըն է, որուն առջեւ ո՛չ ոք պիտի խրաչի, մանաւանդ որ ամբողջ հաւաքածոն կ'արժէ 1 ֆրանք միայն:

Գնել փափաքողները դիմելու են հետեւեալ հասցէին .

K. Kapamadjian

(Bulgarie)

ROUSTCHOUK

Բացուած է թատանորդագրութիւնը 1903 տարւոյ

### ԲԱԶՄԱՎԷՊ ԱՄՄԱԿՐԻ

Թատանորդագրութիւնը, կանխիկ ամէն տեղի համար, 10 Ֆր. է :

## Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի Ի


10 թերթ միասին կազմուած պիտի հրատարակուի Չատկէն առաջ : Այս տարուան Գեղունիին գերազանցապէս շքեղ ընկելու համար ամէն ճիշդ պիտի չխնայուի :

Գեղունիէն զոյացած մաքուր հասոյթին կէսը ազգային որբերու եւ աղքատներու պիտի յատկացուի : Բազմալիկ պի մէջ թատանորդաց անուանները պիտի հրատարակուին : 10 թատանորդ գտնողը վիճակահանութեան թիւ մը կը ստանայ, 20 գտնողը երկու եւ այսպէս համեմատաբար :

Գեղունիի թատանորդագրութիւնն է 12 Ֆր. : Բազմալիկ պի եւ Գեղունի միասին 15 Ֆրանք : Ապահովագրեալ 18 Ֆրանք :

Դիմել՝ Rédaction de la Revue Pazmaveb  
(Italie) Venise (St-Lazare)

### ՅՈՒՇԱՐԱՐ ԺԱՄԱՑՈՅՑ



Այս նոր ձեւի ժամացոյցը իր արտաքին մասին վրայ ունի սպիտակ եզերք մը, որուն վրայ կարելի է նշանակել, ժամերուն ճիշդ անջեւը, ժամագրութեան տեղը եւ օրը :

Դարձեալ ետեւի երկրորդ կախարիչը շինուած է սպիտակ նիւթով մը, որ կը ծառայէ երկար նօթերու այլն գրելու, ժամագրութեան նիւթին համաձայն :

Ժամացոյցին զինն է շղթայով եւ մատիտով

29 Ֆրանք ԿԱՆԽԻԿ :

Ստանալ փափաքողները դիմելու են խմբագրութեանս :

Ա Ձ Դ

### ՔԱՌԹ-ՓՈՍԼԹԱԼԻ ՍԻՐԱՀԱՐՆԵՐՈՒՆ

Այն անձինք՝ որոնք կը փափաքին ունենալ իրենց սրբոյնին մէջ մտանաւորաբար Իզմիտի (Նիկոմիդիա) եւ Փոքր-Ասիոյ պատկերազարդ քառթ-փոսթալները՝ թող հաճին դիմել հետեւեալ հասցէին, որմէ պիտի ստանան իրենց փոխանակած քառթ-փոսթալներուն թուոյն չափ :

Հասցէ՝ Աքրահամ Կ. Կսարնեան

Իզմիտ, (Փոքր-Ասիա) (Ismiit-Turquie d'Asie)

